

doctrinal tendencies. Additionally, English translations of the critical texts are being prepared, which is important for accurately representing the Armenian segment of Evagrian studies within the broader global context.

This study also includes works that were previously attributed to St. Nilus of Sinai (and thus excluded from Sarkissian's publication) but have been conclusively identified in more recent manuscript studies as the works of Evagrius.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՀԱՍՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԵԿՆՈՐՈՇՄԱՆ ԳԻՏԱ-ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐ ԿԱՏԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՄԵԿՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Ա.- ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՀԱՍՈՒ ՄԵԿՆԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՊԵՐՃԱԽՕՍ ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ ՈՒՆԿՆԴՐԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՆԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Ս. Օգոստինոսի բանայայտմամբ՝ իր «Քրիստոնեական գիտութիւն»¹ մեկնագիտական (հերմենեւտիկական) երկի բուն դիտաւորութեան ու ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի խնդրակարգը երկբաղադրեալ է. առաջին՝ ի՛նչպէս կամ ի՛նչ եղանակով գտնել (հասկանալ) Սուրբ Գրոց ճշմարիտ իմաստը եւ երկրորդ՝ ի՛նչպէս կամ ի՛նչ եղանակով արդէն գտնուած իմաստը հաղորդել այլոց²:

Նա իր մեկնագիտական հայեցակարգը ներկայացնող այդ աշխատութիւնում վերոբանաձեւեալ երկհարցադրութեամբ, ըստ էութեան, առաջադրում ու մեկնողաբար իմացայայտում է երկու հիմնախնդիր, առաջին՝ ի՛նչպէս հասկանալ Սուրբ Գրոց ասացելի ստոյգ իմաստը, եւ երկրորդ՝ ի՛նչպէս այն մեկնաբանել՝ հասկացուած իմաստը մեկնորոշմամբ հաղորդել այլոց: Իր մեկնագիտութեան առաջնապատակ հիմնախնդրին՝ Սուրբ Գրոց ստոյգ իմաստը

1 Գրաբար հայերէնով առակել Յշգրտութեամբ հնարաւոր է այն խորագրել՝ «Յաղագս Քրիստոնեական գիտութեան»:
2 Блаженный АВГУСТИН, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киев 1835, с. 13.

տը հասկանալու իր գիտաւորութեան կատարումին նա անդրադարձել ու խնդրալոյծ իր մտորումներն է բովանդակել վերոնշեալ մեկնագիտական աշխատութեան երեք գլուխներում: Իսկ նպատակային երկրորդ հիմնախնդիրը՝ Սուրբ Գրոց արդէն հասկացեալ իմաստի՝ այլոց հաղորդող մեկնորոշման եղանակի իր մտորումները նա բովանդակել է նոյն այդ աշխատութեան չորրորդ գլխում, հասկացման ու մեկնորոշման երկմիասնական խնդրակարգի վերաբերեալ իր քննա-խորհրդածութիւնների խնդրալոյծ կատարումով ապահովելով իր մեկնագիտական հայեցակարգի ու երկի ամբողջականութիւնը³:

Սուրբ Գրոց հասկացեալ ճշմարիտ իմաստն այլոց եւս հասկացման յաջողեցնող՝ հնարաւորող, նպատաւորող ու ապահովող, մեկնորոշմամբ հաղորդելու եղանակը՝ եկեղեցական հոետորին եւ մեկնորոշող բուն իմաստը՝ ունկնդիրներին եւ-կամ ընթերցողներին երկուստեք իմացայայտում է Ինքնին Ճշմարտութեանը՝ Տէր Յիսուս Քրիստոսին վերլնթաց իրենց սիրոյ գիտաւորութեամբ ու կատարումով, որ եւ միայն ի զօրու ու գերծանող է աստուածային իմաստութեան յայտնեալ խորհուրդի անաղարտութեան ու ստուգութեան խեղաթիւրման ամենայն հնարաւոր կերպից ու չափից: Սուրբ Գրոց իմաստութիւնն այլոց եւս ընկալման յաջողեցնող մեկնորոշմամբ հաղորդելու եղանակը եկեղեցական աւանդութիւնում ու կեանքում տեսա-գործնական բնոյթի իր ներկայութիւնն ու ներգործութիւնն է հաւաստել սուրբ հայրերի գիտամեկնողական (էկզեգէտիկական) աշխատութիւններով եւ բանաւոր քարոզ-խօսութեամբ: Արդ՝ մեկնութեան խնդրակարգի լուծմանը՝ ի նպատակեկեղեցական կեանքում Աստուծոյ իմաստութեան քարոզխօսութեան ս. Օգոստինոսն անդրադառնում ու իրագործում է՝ քննութեան առնելով ու մտայայտելով մեկնագիտութեան ու եկեղեցական հոետորութեան փոխառնչուածութիւնը: Քանզի ե՛ւ «Սրբազան մեկնագիտութեան» իր հայեցակարգը, ե՛ւ եկեղեցական հոետորութիւնը Սուրբ Գրոց խորհրդաքննութեամբ՝ նպատակամէտ են նրանում բովանդակեալ աստուածային իմաստութեան բանահաստութեան (հասկացման) եւ մեկնողաբար բացորոշման:

Ահաւասիկ եւ՝ իր մեկնագիտական աշխատութիւնն ամփոփող չորրորդ գլխում ս. Օգոստինոսն անդրադարձել է եկեղեցական բանարուեստի խնդրակարգին: Նա քրիստոնէական գիտու-

3 Անդ, էջ 240 եւ ամբողջապէս՝ 239-355:

թեամբ քննա-խորհրդածելով՝ վերանայելով ու վերաիմաստաւորելով անտիկ փիլիսոփայութեան ու հոետորութեան՝ յատկապէս Պղատոնի ու Կիկերոնի՝ աշխատութիւններից ուսեալ իր փորձառութիւնը՝ Սուրբ Գրոց վերիմաստութեան կամ խորիմաստութեան (վերին իմաստութեան կամ խորին իմաստութեան) խորհրդիմաց գիտութեամբ բանաձեւել է իմաստնառու այլոց եւս մեկնորոշմամբ հաղորդմանն անհրաժեշտ ու նախընտրելի կանոնարուեստ: Ըստ նրա մեկնահայեցակարգի, եկեղեցական խօսքարուեստում Սուրբ Գրոց վերիմաստութեան հաղորդումն ուսումնասէր իմաստնառու անձանց նախընտրելիօրէն նպատակահասու է երկուստեք ու միահիւս՝ բանահասու ու մեկնորոշ գիտութեամբ եւ պերնախօս արուեստաւորութեամբ:

Բ.- ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆԸ՝ Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱԳԵՏԻՆ ՈՒ ՔԱՐՈԶԱԽՅՈՍԻՆ

Հոետորական գիտելիքի կոչումն ու ըստ այդմ՝ իսկութիւնը մարդկային խօսունակութեան ներկրքումն ու կատարելագործումն է արուեստի՝ խօսքարուեստի կամ բանարուեստի: Անտիկ յունական եւ ապա՝ լատինական լեզուա-, արուեստա- եւ գիտամշակոյթում հոետորութիւնը ստեղծուել եւ իր կոչումն ու ըստ այդմ՝ ամենքին յայտիմաց իր իսկութիւնն է հաստատագրել որպէս արուեստ: Հոետորութիւնն իրենում ունի տեսա-գործնական բաղադրատարրեր եւ ներկայանում է որպէս տեսական արուեստա- կամ գիտահայեցակարգային իր կանոնակարգով ու գործնական կատարումով կայացող գիտելիք: Ժամանակակից փիլիսոփայական մեկնագիտական (հերմենեւտիկայի) աւանդոյթում «գոյութեանակալ հերմենեւտիկայի», թէեւ, ըստ իս, առաւել խորաքնին բանայայտմամբ խորագրեալ՝ «իսկութեան հերմենեւտիկայի», ռահվիրայ Հ.-Գ. Գաղամբրի բնորոշմամբ՝ հոետորութեան գիտելիքի բնոյթն «արուեստ ուսուցանող» է եւ ծառայում է պերնախօսութեան արուեստին⁵: Մարդկային կարողունակութիւնը՝ առ պերնախօսութեան արուեստ ներկրթող ու ներկատարելագործող հոետորութեան գիտելիքին համաբնոյթ, ըստ Հ.-Գ. Գաղամբրի, այդկերպ «արուեստուսոյց» է նաեւ քերթողական արուեստը, իր ուսուցողական ծառայութիւնը մատուցելով բանաստեղծական արուեստին եւ քերթողական ա-

4 Цицерон, Об ораторском искусстве, Москва 2022.
5 ГАДАМЕР, Х. Г., Истина и метод, Москва 1988, с. 226.

րուեստի ստեղծագործութիւնների գնահատմանը⁶: Եւ ըստ նրա, «միջնադարեան քրիստոնէական մշակութային աւանդութիւնում հոետորութիւնն էապէս տարբեր է անտիկ հոետորութեան արուեստից»⁷:

Սկզբնաւորութեան վաղ յոյն սոփեստների բանարուեստում, առհասարակ, հոետորութիւնը կամ ճարտասանութիւնը սահմանաւորւմ է ոչ ըստ իր առարկայի, այլ միայն ըստ իր կատարումի. «...Ճարտասանութիւն է հաւանութեան արարչական»⁸, որի պատճառով եւ այդ սահմանումը կատարեալ չէ, «քանզի ոչ միայն քարտասանութիւն է հաւանութեան արարիչ, այլեւ տրամաբանական իմաստասիրութիւն»⁹: Հոետորութիւնն իր ասելիքին այլոց հաւանութիւն է ստեղծում ու համոզում՝ իրենում ոչ միշտ սկզբունքային նպատակ առաջադրելով ճշմարտութեան իմացայայտումը, այլ յանուն ամենքին իր ասելիքի միմիայն հաւանութեան ու համոզութեան՝ բանարուեստի կիրառման ճշմարտավրէպ որեւէ կանխադրեալ իր նպատակներին իսկ ենթադասելով բուն ճշմարտութիւնը: Թէեւ ս. Օգոստինոսը, որպէս ամենքին յայտիմաց, հաստատագրում է, որ «հոետորութիւնն արուեստ է մարդկանց համոզելու ե՛ւ նշարտութիւնում, ե՛ւ ստորութիւնում»¹⁰, այնուամենայնիւ, յաւելում է, որ հոետորութեան կանոնների իմացութիւնը պէտք ու օգտակար է, քանզի ով կարող է համարձակուել պնդելու, թէ քրիստոնէական վարդապետութեանը դիմամարտների հետ բանավէճերում ճշմարտութիւնն իր պաշտպանների խօսքում պէտք է լինի անգէն՝ ի

6 Անդ:
7 Ռ. Քոզարեան, Ս. Օգոստինոսի քրիստոնէական վարդապետութիւնում Սուրբ Գրոց հասկացումն ու մեկնութիւնը՝ շնորհ թէ գիտութիւն – Փիլիսոփայութիւնը արդի աշխարհում, գիրք VIII, ՀՀ ԳԱԱ ՓՄԻԻ, «Լիւմուշ», Երեւան 2018, էջ 153: Ս. Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգի իսկութիւնն է հարցադրում ու մեկնորոշում Ռ. Քոչարեանի փոխյաջորդի յոդուածաշարում՝ ՀՀ ԳԱԱ ՓՄԻԻ «Փիլիսոփայութիւնը արդի աշխարհում» խորագրով տարեգրքի VIII-XI համարներում՝ 2018-2021 թուականներին: Նրա մեկնահայեցակարգի վերաբերեալ տե՛ս նաեւ Յ. Քեօսեան, Աստուածաշնչի մեկնութիւնը Ա.-Ե. դարերում, Երեւան 2018, էջ 239-259:
8 Դ.Ա.Ի.Փ. Ա.ՆՅԱՂԹ, Սահմանի իմաստասիրութեան – Երկասիրութիւնի փիլիսոփայական, Ս. ԱՐԵՆՇԱՏԵԱՆ (աշխ.), Երեւան 1980, էջ 51:
9 Անդ:
10 Блаженный Августин, Христианская наука, или Основания. св. Герменевтики и церковного красноречия, Киев 1835, с. 240.

դէմ ստի ու մոլորութեան¹¹: Եւ արդեօ՞ք սուտ իրերի ու հէնց ստութեան համոզիչ ապացոյցներ յօրինողների ձգտման ու հոետորութեան արուեստով զօրացած կարողունակութեամբ ու հմտավարժութեամբ իրենց ունկնդիրների բարեհաճութիւն, ուշադրութիւն ու հասկանալիութիւն ապահովելու համեմատ՝ նշարտութեան պաշտպանները պէտք է հաւաստեն իսկութիւնը միայն այնքան վատ, որ ունկնդիրներին ձանձրալի, դժուարահասու ու հաւատարու անյօժարութեամբ լինի Աստուծոյ Բանի՝ բուն իսկութեան ու իմաստութեան մեկնողաբար բացորոշմանն ուղղորդուած նըրանց քարոզխօսութիւնը¹²: Արդեօ՞ք իրաւ ու արդար եւ ընդունելի է, երբ ոմանք հոետորութեամբ զօրացած եւ, սակայն, սուտ հիմնաւորումներով կարողունակ են եղծանել ու հերքել ճշմարտութիւնը եւ անխախտ ու անսասան հաստատել սուտը՝ իրենց խօսքի զօրութեամբ մարդկանց սրտերը շարժելով, հրապուրելով ու գրաւելով մոլորութեան՝ երբեմն սարսափեցնելով ու տրտմութեան մատնելով եւ երբեմն խանդավառելով ու կրակոտ յորդորելով, իսկ ճշմարտութեան պաշտպաններն անկարողունակ լինեն ե՛ւ բուն ճշմարտութիւնը պաշտպանել, ե՛ւ սուտը հերքել՝ ճշմարտութեանը թիկնած ու «փռուած» իրենց թմբբանինը ու յագեցած լինելութեամբ, ծոյլ ու սառը նրա ու նրանով պաշտպանութեան խնդրում¹³: «Ո՞վ կը կամենայ այդպէս անիմաստուն իմաստասիրել», – հարցնում է ս. Օգոստինոսը (ընդգծումը՝ Ռ. Ք.) եւ ապա շարունակում. «Ընդհակառակը, եթէ քարտասանութեան գիտութիւնն իր բնութեամբ երկրեւեռութեան մէջտեղում՝ մեծ զօրութիւն է հաղորդում ե՛ւ սուտ, ե՛ւ նշարիտ հասկացութիւններին, ինչո՞ւ բարի ու լաւ մարդիկ չգրադուեն այս գիտութեամբ, որպէսզի իրենց խօսքում այն մարտնչի յանուն նշարտութեան, երբ վատ մարդիկ օգտագործում են այն որպէս պղծութեան ու մոլորութեան միջոց ու զենք՝ յանուն ունայն ու անպիտան իրերի պաշտպանութեան»¹⁴: Մրբազան հօր այս դիտարկումը՝ քրիստոնէական վարդապետութեան ու բուն իմաստութեան ուսուցանութեան խնդրակարգում հոետորութեան օգտակարութեան ու պիտանութեան հարցադրումը, յորդորն ու պահանջը, անշուշտ, ճշմարիտ ու համոզիչ է՝ արդար ու իրաւացի:

11 Անդ:
12 Անդ, էջ 240-241:
13 Անդ, էջ 241:
14 Անդ, էջ 241-242:

Գ.- ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՅՆՈՒՄ ԲՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆԻ՝ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ամենայն բանախօսութիւն բաղադրեալ երկմիութիւնն է իր «ինչ» ասելիքի ու «ինչպէս» ասման կերպի՝ իր երկբաղադրութեան տարրերով ու միութեամբ կոչուած ունկնդրի նկատմամբ առանձնաբար՝ տեսական կամ գործնական եւ կամ միասնաբար՝ տեսագործնական ներգործութեան: Եւ ամենայն բանախօսութիւն իր նշեալ երկտարր միութեամբ իրագործում է գուցէ լոկ տեսական ներգործութիւն՝ առ ճշմարտութիւն ու այլ ամենայն բարեաց կամ անբարեաց ուսուցանութեան եւ-կամ ուսումնասիրման, գուցէ լոկ գործնական ներգործութիւն՝ առ բարեվարքութեան կամ անբարեվարքութեան՝ երբեմն բարենշանակ կամ անբարենշանակ հրամանի կատարման եւ երբեմն լոկ կամակատարութեան, գուցէ տեսագործնական երկմիութեամբ ներգործութիւն՝ ազատահոգի սիրով ու ոչ ամենեւին ստիպողական բռնութեամբ ունկնդրի հասկացման ու ի գործ կատարման՝ բանահասու ներհամոզմամբ ու յօժարակամ ջանադրութեամբ իրականացման:

Իսկ հռետորական բանախօսութեան բուն գաղափարը ու դրան մտահայոց դիտաւորութիւնը, կերպարանումն ու կատարումն է՝ ամենայն հնարաւոր բարի կամ անբարի միջոցներով ներգործել ունկնդրին՝ առ հաւանութիւն ու համոզում բանախօսի կողմից բարենշանակ կամ անբարենշանակ բովանդակութեամբ ասուածի: Եւ վաղեմի տեսաբանող կամ գործնական հռետորութեան կոչումն էր՝ բանախօսի կողմից «ինչ» ասուածի ու «ինչպէս» ասման կերպի երկմիութեամբ ասացեալ բովանդակութեան առնչութեամբ ունկնդրին ներգործել հաւանութեան արուեստի որպիսութեանը ներյատուկ էր ունկնդիրների «հաւանութեան (եւ-կամ համոզումի՝ Ռ. Ք.) արարման» գաղափարով ներքին ու արտաքին կերպաւորութիւն:

Ի տարբերութիւն անտիկ յունական հռետորութեան այդտեսակ որպիսութեան, ըստ իս, միջնադարեան քրիստոնէական Եկեղեցու աստուածաբանական գիտութիւններում ու արուեստներում տրամագծօրէն այլ է հռետորութեան բուն գաղափարը եւ ըստ այդմ՝ նաեւ ներկառուցուածքը: Քրիստոնէական հռետորութեան կոչումի, բուն գաղափարի ու այդ գաղափարին մտահայեցող դի-

տաւորութեան եւ ըստ այդմ՝ կերպարանումի ու կատարումի իսկութիւնը միջոցների մէջ խտրականութիւն չընելով ու ամէն գնով, այդ թւում՝ նաեւ ոչ-բարոյական միջոցներով եւ նոյնիսկ կեղծիքներով ու ոչնչարարութեամբ այլոց համոզելու նպատակին հասնելը չէ¹⁵: Միջնադարում եկեղեցական հռետորութիւնը ներկայանում է հէնց «Աստուծոյ Բանի Բարոգութիւնը» տեսաբանող ու կենսագործող կոչումով ու իսկութեամբ եւ ուրեմն՝ հէնց այդ գաղափարին մտահայոց դիտաւորութեամբ եւ ըստ այդմ՝ իր ներքին ու արտաքին կերպարանմամբ ու կատարումով: Միջին դարերի «Բրիտանական հռետորութիւնը, ըստ իր բուն կոչման ու իսկութեան, աստուածայինն ու հէնց ճշմարտութիւնն՝ ի փրկութիւն մարդկանց բանախօսելու տեսութիւնն ու կենսագործումն է»¹⁶: Աստ՝ հռետորութիւնը ներկայանում է իր կոչմանը համապատասխան բարենշանակ ու իսկական գոյութեամբ, եւ հարկ է այն հասկանալ որպէս եկեղեցական բանարուեստ կամ խօսքարուեստ:

Ի տարբերութիւն վաղեմի հռետորութեան, որում իսկութիւնն ու անիսկութիւնը զուտ միջոցներ են բանախօսի բուն նըպատակային ու բովանդակային ասելիքի առնչութեամբ ունկնդրի հաւանութեան կամ համոզման հասնելու համար, եկեղեցական բանարուեստի գոյութեան ու հէնց որպէս այդպիսին կայացման համար իսկութիւնն ունի հիմնարար ու բուն նպատակային նշանակութիւն: «Իսկութիւն» անուանում է ոչ թէ գոյի որպէս այդպիսին գոյութիւնը՝ սքողեալ ու աններկայ մարդկային կեցողութեանն ու անյայտ նրա բանահասութեանը, այլ, ընդհակառակը, նոյն այդ գոյի արդէն անթաքոյց ներկայութիւնը մարդկային կեցողութեանը ու նաեւ նոյնորոշուող (իդենտիֆիկացուող) առյայտումը նրա բանահասութեանը: Եւ իսկութիւնը հիմնորոշ է եկեղեցական խօսքարուեստի առաջացման ու լինելութեան համար: Քանզի Բանն Աստուծոյ՝ Տէր Յիսուս Քրիստոսի գոյութիւնը՝ էութեամբ առ Աստուած ու իսկութեամբ՝ առ մարդիկ, եկեղեցական քարոզչութեան բուն առարկան է՝ կայացնելով այն որպէս Բանի Բարոգութիւն: Ըստ քրիստոնէական վարդապետութեան, Տէր Յիսուս Քրիստոսն է բուն իսկութիւնն ու Հօր Իմաստութիւնը: Անեղ է-ին՝ Տէր Յիսուս Քրիստոսին, Աստուծոյ Որդուն, որ եւ՝ «Բանն Աստուծոյ», զիմելով ու հայցմամբ խօսքն առաքելով՝ ներսէս Շնորհալու

15 Քոզարեան, Ռ., Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիրտութեան» ուսումնասիրութեան առաջնային ու գերագոյն առարկան, «Էջմիածին», 2018, հտ. Ժ., էջ 25:

16 Անդ:

«Հաւատով խոստովանիմ...» աղօթքում ասում է՝ «Իմաստութիւն Հօր Յիսուս»¹⁷:

Ահաւասիկ, եկեղեցական հռետորութեան՝ բանարուեստի կամ խօսքարուեստի դիտաւորութիւնը, ըստ այդմ՝ կերպարանումն ու կատարումն է՝ հասկանալ իսկութիւնը եւ մեկնորոշ բանայայտել այն ուսումնասէր այլոց: Քանզի Քրիստոսին ուխտացեալ ժողովուրդն առ Աստուած առինքնող եկեղեցական կեանքում աստուածային իմաստութեան բանահասութեան եւ ի յաւիտենական փրկութիւն կենագործման իր փափաքով ունի կարիք Սուրբ Գրոց իմաստութեան խորհրդուսոյց եկեղեցական քարոզխօսութեան ու նաեւ այն տեսաբանող ու կատարելագործող քրիստոնէական հռետորութեան: Իսկ քրիստոնէական հռետորութիւնն իր իսկական գոյութեամբ ներկայանում է՝ ճշմարտութիւնն ու բարին, որպէս մարդկային կեցութեան համար անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյութիւն, հասկացող ու մատուցանող բանարուեստ կամ բանագիտութիւն (հռետորութեան «իմը») ու խօսքարուեստ (հռետորութեան «իմը») եւ հէնց տեսութիւն՝ անհրաժեշտ ու օգտակար եկեղեցական քարոզխօսութեան: Եւ սակայն, միջնադարում բանաւոր եւ-կամ գրաւոր իր արտայայտութեամբ քարոզխօսութիւնն ու այն տեսաբանող քրիստոնէական հռետորութիւնը երբեմն կայացել են իրենց անիսկական գոյութեամբ՝ իրենց բուն կոչումից եւ ըստ այդմ իրենց գոյութեան իսկութիւնից օտարացեալ ներքին ու արտաքին կերպառութեամբ: Քանզի մինչ աստուածաշունչ ամենայն գրքերում յայտնեալ Աստուծոյ Բանի եկեղեցական քարոզխօսութիւնն ու նաեւ այն տեսաբանող քրիստոնէական հռետորութիւնը, առաջնահերթօրէն անհրաժեշտ է այդ գրքերում ասացեալի՝ բուն իսկութիւն յայտող իմաստութեան, ստոյգ հասկացում ու մեկնութիւն: Իսկ Սուրբ Գրքերում ասացեալին ստուգութեամբ վերահասու լինելու համար առաջնահերթօրէն հարկ է հարցադրել ու առաջադրել ստոյգ հասկացման ու մեկնութեան որպիսութեան բացայայտումը եւ ապա՝ կիրառել այն աստուածաշունչ ամենայն գրոց նկատմամբ, որ եւ աստուածաշնչեան մեկնագիտութեան (հերմենեւտիկայի) խնդիրն ու կատարումն է¹⁸:

17 ՔՈԶԱՐԵԱՆ, Ռ., Պատմութիւնը եւ Հերմենեւտիկան, Գիրք 1. Մովսէս Խորենացու պատմագիտական հայեցակարգը, Երևան 2016, էջ 265: Նաեւ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ, Հոչակաւոր աղօթք, տպագրեալ երկոտասան լեզուօք, Ի տպագրատան Լազարեանց ձեւարանի, Մոսկով 1830, էջ 4:
18 Ռ. ՔՈԶԱՐԵԱՆ, Ս. Օգոստինոսի «Մրրագան Մեկնագիտութեան» ուսումնասիրութեան առաջնային ու գերագոյն առարկան, ԹՂ. աշխ., էջ 26:

Դ.- ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՕՍՔԱՐՈՒԵՍՏԻՆ ԱՌԱԻԵԼԱՆՊԱՍՏ ՈՒ ԲԱՐԵՊԻՏԱՆ՝ ՀՌԵՏՈՐՆԵՐԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ, Ի ՀԱՄԵՄԱՏ ՎԱՂԵՄԻ ՀՌԵՏՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Ս. Օգոստինոսը յայտորոշելով վաղեմի հռետորութեան դիտարկումների ու կանոնակարգի պիտանութիւնն ու օգտակարութիւնը եկեղեցական քարոզխօսութեան նպատակամէտ ֆարտասանութեան արուեստին ու գիտութեանը, հաստատագրում է նաեւ այդ յարաբերակցութիւնը սահմանող մտքի բանաձեւ. «Հռետորութեան դիտարկումներն ու կանոնները՝ ներկայակցուելով բարձրակիրք լեզուից փոխառեալ բառերի գեղեցկութիւնն օգտագործող՝ պարզորոշ ու ֆոխ արտայայտուելու հօր ու նուրբ հմտութեանը, կազմորոշում (ու կայացնում – յաւելումը՝ Ռ. Ք.) են այսպէս կոչուած ֆարտասանութիւնը կամ պերեպիտութիւնը»¹⁹: Եւ սակայն, վերոասացեալը չի նշանակում, թէ ս. Օգոստինոսը եկեղեցական քարոզխօսութեան եւ-կամ Սուրբ Գրոց իմաստութեան բանահասութեան ու մեկնորոշման համար հռետորութեան օգտակարութեան ու պիտանութեան հետ մէկտեղ պնդում է նաեւ դրա անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյութիւնը: Այս առնչութեամբ նա համաձայնելով հռոմէական ճարտասանութեան հեղինակների հետ, ըստ որոնց՝ հռետորութեան ուսումնասիրութիւնը հարկ է ձեռնարկել վաղօրօք՝ բարեյարմար ժամանակում, համարեա՝ թէ նոյնաբար խօսքարուեստի ուսումնառութեանն անհրաժեշտ է համարում մարդկային կեանքի յարմար ու համապատասխան տարիներ, երբ հռետորութեան տեսական դիտարկումները, կանոններն ու գործնական կատարումը ուսումնառում են հեշտ ու արագ²⁰: Եւ այնուամենայնիւ, սրբազան հայրը հռետորութեան բուն արուեստի ուսումնառութեան հարցը Սուրբ Գրոց իմաստութեան բանահասութեան ու մեկնորոշման եւ նոյնիսկ քարոզխօսութեան համար չի դիտարկում որպէս կարեւորագոյն ու անհրաժեշտագոյն, թէկուզ եւ հասուն տարիքում եւս, երբ հոգեկան կարողութիւնները դանդաղում են, կարող են լինել անձինք, որ եւ յաջողութեամբ ի զօրու են լինում դրա ուսումնառութեան²¹: Ըստ նրա, այդ գիտութեան ուսումնառութեան հոգածու-

19 АВГУСТИН Блаженный, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киев 1835, с. 242.
20 Անդ., էջ 242-243:
21 Անդ., էջ 243:

թեան խնդրում բաւ է այն յանձնարարել երեխաներին եւ նոյնիսկ ոչ ամենքին, որոնց ուսումնառութիւնը նախատեսուած է Եկեղեցու ծառայութեան ու կարիքների համար, այլ միայն նրանց, որ եւ զբաղուած չեն առաւել անհրաժեշտագոյն ու նախընտրագոյն որ-եւիցէ բանով, քան հռետորութիւնը: Իսկ սուր ու կրակոտ օժտու-լածութեամբ ոմանց դիւրին է պերճախօսութեան ներկրթեալ լի-նել անմիջականօրէն «հռետորների ընթերցմամբ եւ ունկնդրու-թեամբ, քան քարտասանութեան կանոնների նշգրիտ կատարումով»²²: Եւ նոյնիսկ «հռետորութեան կանոնները, ըստ պերճախօսագոյն ու սրամտագոյն այրերի, կազմուել են ոչ այլ կերպ, քան լաւագոյն հռե-տորների ստեղծագործութիւններում պարունակուող գեղեցկութիւն-ների (գեղակերտութիւնների) դիտարկմամբ ու յայտորոշմամբ՝ կա-ռուցակերտելով որոշակի համակարգ կամ գիտահայեցակարգ»²³:

Ըստ ս. Օգոստինոսի, քրիստոնէական գրամշակոյթի ընթեր-ցանութեամբ արդէն, թէկուզ եւ առանց պերճախօսութեան ներ-կրթութեան յատուկ դիտաւորութեան, հնարաւոր է հասու եւ ընկալ դառնալով՝ եթէ նոյնիսկ չասենք կանոնական գրքերին, որ եւ ի-րենց առաւելագոյն կարեւորութեամբ նոյնանման են լեռան կա-տարին կանգնեալ քաղաքի, այլ իրենց բազմաքանակութեամբ ան-պակաս՝ Եկեղեցական (հայրերի) ստեղծագործութիւնների, անն-կատելիօրէն ներկրթեալ եւ ուսեալ կարելի է դառնալ ասացեալի բուն ոճին կամ արտայայտչաձեւին, երբ յատկապէս ընթերցեալով օրինակեալ՝ վերագրառում կամ վերաթելադրում եւ ապա՝ իրենց իսկ բանահասու հոգեւոր իմաստաւորումն ու վերազգացեալն են մտակերպում ու վերաձայնում իրենց հաւատի ու բարեպաշտու-թեան չափով²⁴: Եւ նա յատուկ ընդգծում է, որ արագընթաց օժ-տուածութեան բացակայութեան պարագայում՝ հռետորութեան կանոններն իսկ կարող են լինել լիովին անհասկանալի կամ նոյ-նիսկ բազում դժուարութեամբ ինչ-որ մի չափ հասկանալու պա-րագայում՝ նուազաչափ օգտակարութիւն ունենալ: «Նոյնիսկ այն մարդիկ որ եւ ուսանել են այդ կանոնները եւ արդ՝ գեղեցկարար ու պերճախօս են իրենց ասելիքում, ոչ ամէնքն են խորիւմ ամենայնն ու ամէնուր խօսել ըստ կանոնների, միակ բացառութեամբ, երբ մտո-

22 Անդ:
23 Անդ, էջ 272:
24 Անդ, էջ 243-244:

րում են բուն կանոնների վերաբերեալ»²⁵: «Հագիւ թէ մի ոք նրանցից իր խօսքի պահին երկուստեք կատարի ե՛ւ քարտասանութիւն, ե՛ւ հա-մատեղ խորիի քարտասանութեան կանոնների մասին, քանզի այդ դէպքում վտանգ է պատճառում մտամոռութեան՝ ի՛նչ է պիտոյ ասելու, երբ մտախոհ է՝ ի՛նչպէս է պիտոյ ասել՝ ըստ գիտութեան»²⁶,– ան-կեղծօրէն յայտնում է իր տեսակէտը ս. Օգոստինոսը: Յիրաւի, «պերճախօս անձանց խօսքում կատարելապէս իրագործում են քար-տասանութեան կանոնները, թէեւ իրենք մտախոհ չէին այդ կանոննե-րին թէ՛ խօսքի նախապատրաստուելիս եւ թէ՛ իրենց արդէն իրական պերճախօսութեան ընթացքում, ուսեալ էին երբեւէ այդ կանոններին թէ՛ նոյնիսկ անձեռնկալ ու անիմայ դրանց՝ բնականօրէն ու ակամայից հետեւում են քարտասանութեան արուեստի կանոններին, քանզի ի-րենք են քարտասան, այլ ոչ թէ ենթարկում կանոնների՝ դառնալու համար քարտասան»²⁷: Նկատելի է եւ սրբազան հօր մեկնագիտա-կան երկի ողջ շարադրանքով նաեւ հաւաստի, որ իր աշխատու-թեան բովանդակ ծիրում ու այս ամենայն մտորումներում եւս ս. Օգոստինոսը ոչ միայն ինքնախոստովանաբար հէնց իր՝ հռետո-րութեան ուսեալ, ճարտասանութեան գիտութեամբ ու նաեւ ա-րուեստով օժտուած՝ շնորհալի ճարտասան փորձառութեան ինք-նաքննութեամբ է ճշմարտում իր խորհրդածութիւնները: Եւ ան-շուշտ, կարելի է նկատել, որ չսահմանափակուելով լոկ սեփական աստուածաշնորհ օժտուածութեան ներքնական փորձառութեամբ, նա մեկնագիտութեան ու եկեղեցական բանարուեստի իր խորհրդ-դածութիւններն ամփոփում է նաեւ անտիկ յոյն ու լատին անուա-նի հռետորների, սուրբ հայրերի մեկնագիտական ու ճարտասա-նական եւ նոյնիսկ Աստուածաշնչի մատեանների Սրբազան Հեղի-նակների աստուածաշնորհ գիտութեան ու արուեստի փորձառու-թեանը բանահասու քննութեամբ՝ ի լրումն որի իր մտայանգում-ները վերաճշմարտելով քարոզխօսութեանն անհրաժեշտ ու նախընտ-րելի պիտոյականութեան հայեցակէտից²⁸:

Սրբազան հայրը վկայում է նաեւ իրեն յայտնի բազում այ-րերի, որ եւ լիովին անիմայ հռետորութեան կանոնների, առաւել

25 Անդ, էջ 244:
26 Անդ, էջ 244-245:
27 Անդ, էջ 245:
28 Անդ, էջ 354-355:

պերճախօս էին, քան այդ կանոններին փութաջան ու մանրագնին ուսեսալները: Նա վերստին ընդգծում է հռետորներին ընթերցելու եւ ունկնդրելու առաւելաչափ ներգործուն նշանակութիւնը՝ առ ներկրթութիւն ճարտասանութեան ու պերճախօսութեան, վկայելով, որ չի ճանաչում ճարտասանութեան հասունացած եւ ո՛չ մէկին՝ առանց ընթերցելու եւ ունկնդրելու հռետորներին²⁹: Ըստ ս. Օգոստինոսի հայեցակէտի, նոյնիսկ քերականութիւնը՝ ի պիտոյութիւն լեզուի ճշմարիտ ու ամբողջական ուսուցանութեան, ոչ այնչափ կարի ու պիտոյ է երեխաների ուսման, եթէ նրանք մշտապէս ապրէին ու աճէին լիովին ճշգրիտ լեզուով խօսող մարդկանց միջավայրում: Հռետորութեան ու փիլիսոփայութեան ուսուցարար իր կենսափորձառութեան ու մտափորձառութեան քննա-խորհրդածութիւնը միաբերելով ու մտայայտելով՝ սրբազան հայրն ամբողջում է, որ երեխաները՝ անուս ու անգէտ լեզուագործունէութեան որեւէ սխալատիպութեան, ոչ թէ քերականութեան կանոնների ուսումնառութեամբ, այլ միմիայն բնայատուկ իրենց հմտութեամբ ուսեալ եւ ի զօրու կը լինէին լեզուի ամենայն սխալներից իրենց զգուշութեան ու զերծանութեան, ինչպէս նաեւ այլոց եւս յայտնացումն³⁰:

Ե.- ՔԱՐՈԶՆՈՍՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏՈՒՍՈՅՑ ՊԻՏՈՅԱ-ԴՐՈՅԹՆԵՐԸ

Ս. Օգոստինոսը մեկնագէտի պրակտիկայի կամ քարոզխօսութեան բուն կոչումն ու իսկութիւնը, դիտաւորութիւնն ու խնդրակարգի ներկարգաւորութիւնը յայտորոշող, սկզբնադիր առաջնաքայլն ու յաջորդաքայլերը սահմանող ուսուցմամբ՝ քրիստոնէութեան խրատուսոյց քարոզախօս անձին ծանուցում է բանարուեստի գիտութիւն: Ըստ նրա, Սուրբ Գրոց իմաստութեան եւ հէնց Աստուծոյ Բանի քարոզխօսութեան արուեստի տեսա-գործնական ներկրթութեանն անհրաժեշտ ու նախընտրելի են որոշակի պիտոյադրոյթներ՝ հրահանգներ կամ պահանջներ: Որո՞նք են քարոզխօսութեան արուեստուսոյց այդ պիտոյադրոյթները:

Ա. «Քրիստոնէութեան ուսուցիչն ու Սուրբ Գրոց մեկնիչը ուղիղ հաւատի պաշտպանն է, անձանց միտքը, հոգին ու բովանդակ

29 Ա.Ա.Պ., էջ 246:
30 Ա.Ա.Պ., էջ 246:

գործառնութիւնը գերող ու կապանքող մոլորութիւններից գերծանողը, հետու վանողն ու հալածողը»³¹:

Բ. «Քրիստոնէութեան ուսուցարար քարոզախօս անձը պարտ է մի կողմից՝ ուսուցանել բարու, միւս կողմից՝ ուսուցազերծել (կամ ուսուցազատել) վատից, իր վարդապետութիւնում հաշտեցնել հակառակներին, խանդավառել թոյլերին, խրատուսոյց հոգեկրթել անուսներին՝ ի՛նչ անել եւ ի՛նչ յուսալ»³²:

Արդ՝ գտնելով ուշիմ ու հասկացող ունկնդիրներ կամ աստուածային իմաստութեան ու հէնց խրատուսոյց հոգեկրթութեամբ նրանց դարձնելով այդպիսին՝ քրիստոնէութեան քարոզիչը՝ Աստուծոյ Բանի քարոզախօսը, ըստ ս. Օգոստինոսի, հարկ է կատարել քարոզխօսութեան արուեստին պիտոյական եւ այլ դրոյթները:

Գ. «Եթէ ունկնդիրներին առաջնահերթօրէն հարկաւոր է ուսուցանել, ապա ամենից պիտանի է պատմողական կամ պարզայայտող խօսքի տեսակը՝ առաջնորդելով ուսումնասիրուող առարկայի պարզ կամ մթին որպիսութեան խնդրով»³³:

Եւ այնուհետ՝ եկեղեցական բանարուեստի իր ուսուցանութիւնը ս. Օգոստինոսը շարունակում է նաեւ մէկ այլ կանոնով.

Դ. «Իսկ կասկածելի առարկաները՝ առ նշարտութիւն հաւաստմամբ ունկնդիրներին ներկայացնելու համար հարկ է խօսքի տեսակներից կիրառել ապացոյցներն ու մտայանգումները»³⁴:

Ե. Եւ «եթէ հարկաւոր է հոգեներգործել ունկնդիրներին առաւել ներգգացման, քան ուսուցման՝ խօսքում պէտք է առաւել գորութիւն ու համոզութիւն, որպէսզի ունկնդիրներն անզգայ ու հեղզ չլինեն՝ ի կատարումն արդէն իսկ գիտեցեալի, եւ որպէս նշարտութիւն քանաչաժ առարկաներն իրենց սրտի խորքում իւրացուած առյաւէտ ամբարներն, եւ աստ՝ քրիստոնէական խրատուսոյց անհրաժեշտ են յատկապէս հմտութիւններ մեղսայայտման, հոգեդրոյման, եղծման եւ այլ ամենայն միջոցներ՝ ի սատար հոգեներգործութեան»³⁵:

31 Ա.Ա.Պ., էջ 246:
32 Ա.Ա.Պ., էջ 247:
33 Ա.Ա.Պ., էջ 247:
34 Ա.Ա.Պ.:
35 Ա.Ա.Պ.:

Ձ.- ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԵԱՆ
 ԶՈՒԳՈՐԴՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ՝ ՔԱՐՈՋԻՕՍՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ
 ՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՊԻՏՈՅՈՒԹԻՒՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Ըստ ս. Օգոստինոսի, քրիստոնէութեան ուսուցարար ամէն ոք է ձգտում ու կատարում վերոասացեալը՝ ոմանք կոպիտ, անոճ, տգեղ, սառն ու անտարբեր, իսկ ոմանք չափազանց սրամիտ, գեղեցիկ ու սրընթաց: Այնինչ, քարոզչութեան ունակ է իմաստութեան խորհրդածողն ու հէնց իմաստուն խօսողը, թէկուզ եւ՝ ոչ պերճախօս կամ գեղեցկախօս, եւ լոկ այդպիսին է կարողունակ ունկնդիրներին օգտակարութեան, թէեւ ոչ այնչափ, որ եւ նոյն այդ իմաստունութեանը հնարաւոր է արդէն նաեւ պերճախօսութեան շնորհով օժտուածութեամբ գուգորդուած³⁶: Եւ հարկ է զգուշանալ նաեւ բոլորն ու անմիտ ճարտարախօսութեան ի գորու ամենքից, որ եւ դուրեկան են ունկնդրին նոյնիսկ լսելու լիովին անարժան իրերի խոհադատմանն առժամայն, քանզի նրա միշտ գեղեցկախօսութիւնը կարծեցնում է ունկնդրին, թէ նոյն ու միշտ խօսում է ճշմարիտ ու իմաստուն³⁷: Եւ եթէ անգամ ի հնուստ՝ իրենց աշխատութիւններում ճարտասանութեան գիտութեան պիտոյութիւնն անհրաժեշտող ու կանոնակարգող եւ, սակայն, ի վերուստ՝ լուսոյ Հօրից սփռեալ իսկական իմաստութեանը դեռեւս անիմայ ամենքի խոստովանութեամբ՝ իմաստութիւնն առանց պերճախօսութեան նուազ օգուտ է պետութիւններին, իսկ պերճախօսութիւնն առանց իմաստութեան, ընդհակառակը, յաճախ մեծավնաս ու երբեք օգտակար չէ, «ապա քարտասանութեան արժանիքների մասին արդ ինչպե՞ս մեզ չմտորել այլկերպ ու հէնց խոհեմութեամբ (բարեմտութեամբ), որ եւ գաւակներն ու սպասաւորներն ենք այդ իմաստութեան»³⁸: Իսկ ովքեր են ընդունակ եւ ունենալ իմաստուն խօսման: Աստ՝ ս. Օգոստինոսն ամրագրում է քրիստոնէութեան քարոզչի առինքնող կերպար մեկնայայտող՝ ճշմարտող ու դրուատող բնորոշում: Իմաստուն խօսելու կարողունակ են նրանք, ովքեր Սուրբ Գրոց իմաստութեան խորհրդիմացութեան ճշմարիտ յաջողութեամբ՝ ոչ թէ լոկ հատունակ են ընթերցման ու մտապահման, այլ անկեղծ՝ ազնուասիրտ, ազնուահոգի ու ազնուամիտ փափաքով՝ առ Աստուած եւ մտահայեցմամբ՝ առ աստուածային սէր ու իմաստութիւն քննա-խորհրդ-

36 Անդ, էջ 248:
 37 Անդ:
 38 Անդ, էջ 248-249:

դածու են Սուրբ Գրոց իմաստութեան ջանասէր որոնման ու բանախոհման: Արդ՝ ոչ միայն Սուրբ Գրոց, այլեւ այն մեկնորոշող Առաքելական Թղթերում բովանդակեալ աստուածային իմաստութեանն ունեալ՝ Պօղոս առաքելի մտքին հաղորդ՝ հասու եւ ընկալ ս. Օգոստինոսի վերաբանածեմամբ՝ իմաստուն խօսունակ են լոկ նրանք, ովքեր ոչ թէ յիշում են Սուրբ Գրոց տառը, այլ սեփական սրտի՝ հոգու ակամբ մտահայոյմ Գրի սիրտը՝ ոգին: Եւ անշուշտ, նախընտրելի, լաւ ու արժանապատիւ են նրանք, ովքեր հատունակ են միաժամանակ ե՛ւ յիշողութեամբ Սուրբ Գրքի տեղիների բառացի վերասման, ըստ իրենց կամեցողութեան, ե՛ւ հասկանում են՝ ինչպէս եւ «պիտոյ» ու արժան է հասկանալ³⁹:

«Արդ՝ ով անկարող է խօսել պերճախօս, այնինչ, ըստ իր կոչումի՝ պարտաւոր է խօսել իմաստուն, նրան անհրաժեշտ է մտապահել Սուրբ Գրոց բառերն ու դարձուածքները, քանզի որչափ աղքատ է տեսնում իրեն շնորհներով օժտուածութեան առումով, առաւել է անհրաժեշտ առատանալ Աստուծոյ խօսքով, որպէսզի իր խօսունակութեան տկարութեամբ ասուածն ամրապնդի Սուրբ Գրոց գորութեամբ»⁴⁰: Եւ ըստ ս. Օգոստինոսի՝ Սուրբ Գրոց քարոզչութեան արուեստուսոյց խրատի, ի դէմս իր լեզուի թուացեալ թերահաստութեան՝ նրան հարկ է վերածել մեծ ու սուրբ այրերի վկայութիւններով եւ այնուհետ՝ դուրեկան կլինի ապացոյցներով, երբ անկարող է դուրեկան լինել խօսքի գեղեցկութեամբ: Սուրբ Գրոց իմաստութեան՝ մեկնորոշմամբ հանդերձ քարոզախօս անձին Աստուածաշունչ Մատեանով ու սուրբ հայրերի վկայութիւններով սնեալ իր հոգու ու հէնց իմացունակութեան հոգեւոր վերածութեամբ միայն հնարաւոր ու պարտ է խորացնել սեփական բանահասութեան ու մեկնութեան կարողունակութիւնը:

«Իսկ ովքեր կամենում են խօսել ժողովրդին ուղղուած ոչ լոկ իմաստուն, այլեւ քարտասան խօսք, քանզի աներկրայ է, որ երկուստեք կապակցումն առաւել օգտակար է, - սրբազան հօր խորհուրդն է նրանց, - առաւել լաւ է կարդալ, լսել ու նմանուել քարտասաններին, քան անօգուտ ժամանակ ծախսել հոետորութեան ուսուցիչների հետ»⁴¹: Եւ հարկ է, որ գործնական բանարուեստի սեփական ներկրթութեանն ընտրող այդ ճարտասաններն իրենց խօսքում

39 Անդ, էջ 249-250:
 40 Անդ, էջ 250:
 41 Անդ, էջ 250-251:

իսկապէս լինեն ոչ միայն պերճախօս, այլեւ դրա հետ մէկտեղ՝ իմաստուն: «Քանզի լսել լոկ գեղեցկախօս քարտասաններին միայն դուրեկան է, իսկ իմաստուններին՝ փրկական»⁴²: Եւ յղելով Սուրբ Գրքին՝ սրբազան հայրն իր ասացեալն է վերահաւաստում, թէ Գիրը չի ասում՝ բազմութիւն պերճախօսների, այլ՝ «բազմութիւն իմաստնոց՝ փրկութիւն աշխարհաց» (Իմ Զ, 26): Եւ «պէտք է ամենադառն քոչկութիւնն ընդունել, քանզի փրկական է, եւ հարկ է փախչել քոչկութիւնից, երբ այն կորստաբեր է. Սակայն ի՞նչն է լաւ քոչկութիւնից, երբ այն միաժամանակ փրկական է, եւ՝ փրկականից, որ համատեղ եւ քոչկութիւնն է»⁴³: Իսկ մեր եկեղեցական հեղինակներից բազում են, ովքեր իրենց աշխատութիւններում Աստուծոյ խօսքը ոչ միայն իմաստուն, այլեւ գեղեցկախօս են լուսաբանում եւ նոյնիսկ ժամանակը չի բաւում ընթերցել նրանց բազմաշատ երկերը՝ նոյնիսկ ընթերցելու ձգտում, հոգեւոր ախորժակ ու ազատ ժամանակ ունեցող անձանց⁴⁴, իր ասելիքն ամփոփելով՝ իմաստութեան ու գեղեցկախօսութեան համատեղութեան արդիւնաւէտութիւնն է վերահաստատում ս. Օգոստինոսը:

Ըստ նրա, Աստուծով ու հէնց Սուրբ Հոգով ներշնչուած կանոնական հեղինակների մատեանները, երբ հասկանալի են իրեն եւ ամենից անհամեմատ ոչ միայն իմաստուն, այլեւ պերճախօս են եւ իր համար աներկբայօրէն ու վստահաբար նոյնօրէն այդպիսին են, եթէ անգամ միայն ու անհասկանալի են եւ պերճախօսութիւնն աննկատ ու ոչ բացայայտ⁴⁵: Քանզի աստուածային այդ այրերին յատուկ վսեմ ու վերառինքնող պերճախօսութեանը իրաւ ու հարկի էր խառնուած լինէր ինչ-որ չափի միջնութիւն՝ որպէս եւ հարկադիր մի ազդակ մարդկային բանախոհութեանը՝ իսկութեան ուսումնասիրութեան ու բացայայտման ձգտման ու ջանադրութեան: Իսկ անհամեմատելի ու ամենքից վսեմ ու գերազանց է նրանց խօսքում իմաստութիւնն ու նաեւ պերճախօսութիւնը՝ ոչ թէ խօսքի հոգեշարժութեամբ (պատթետիկութեամբ), այլ հէնց ասացեալի հաստատութեամբ ու հիմնաւորութեամբ, եւ այդ առաւել եւս՝ որչափ եւ ընթերցողին նրանց խօսքը թուում է նուազ ու հասարակ⁴⁶:

42 Անդ, էջ 251:
 43 Անդ:
 44 Անդ, էջ 252:
 45 Անդ, էջ 252 եւ 253:
 46 Անդ, էջ 253:

Հոնտորութեան տեսա-գործնականօրէն գիտակ ու արուեստաւոր ս. Օգոստինոսի հաւաստմամբ՝ աստուածային այրերի՝ Սուրբ Գրոց հեղինակների, իւրայատուկ ու վերին սեռի ճարտասանութիւնն արուեստաւորութեամբ օգտագործում է նաեւ մարդկային քարտասանութիւնն իր կատարելութեան լրումով եւ, սակայն, ոչ պարզայայտ նկատելի իր ներկայութեամբ իրենց գրուածքներում, քանզի նրանց պարտ էր ոչ անձնահաճօրէն ու դիտաւորաբար մերժել ու խուսափել մարդկային ճարտասանութիւնից եւ ոչ էլ սնապարծել ու ինքնահրճուել դրանով: Ըստ ս. Օգոստինոսի, Սուրբ Գրոց իմաստութեան ուսումնասիր ու բանահասու իւրաքանչիւր ոք, վերահասու լինելով ամենքից վերագոյն սուրբ հեղինակների ասացեալի գերազանց իմաստութեանն ու ճարտասանութեանը, հասկանում են նաեւ, որ անհարկի էր ու պէտք չէր նրանց այլ կերպ արտայայտուել, քանզի Սուրբ Գրոց իմաստապատումի կամ խորհրդապատումի բառերն ու դարձուածքները հեղինակով ու նրա ինքնակամ՝ կրթահաճ ու շեղակամ մտօք չեն յօրինուած, որոնուած ու գործածուած, այլ ուղղակիօրէն ու անհրաժեշտօրէն ծնունդ են առել իրերի էութիւնից, որ եւ ընթերցելիս՝ մտորում է, թէ մի պարզ իմաստութիւն է իր իսկ բնակութիւնից ու օրրանից՝ իմաստունի կրծքից ու հոգեխորքից բխում, իսկ պերճախօսութիւնն ընդամենը նրա հետեւորդն է՝ որպէս եւ անբաժանելի ծառայ՝ որեւէ չափ անգամ մարդկային ինքնակամութեամբ չկանչուած առ նա⁴⁷:

Ինչպէս միշտ իր ամենայն մեկնականոնների առնչութեամբ, աստ եւս ս. Օգոստինոսը Աստուծոյ Բանի եկեղեցական մեկնիչների գրաւոր ու բանաւոր բանարուեստում անհրաժեշտ ու նախընտրելի օժտուածութեան՝ իրերի էութիւնից բխող իմաստութեանն անբաժանելիօրէն եմօակարգուած պերճախօսութեան, վերաբերեալ մէջբերում է առաքելական խօսքի կերպօրինակ, ըստ որի՝ «պարծիմբ եւս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք եթէ նեղութիւնք գիտերութիւն գործեմ, համբերութիւն գիտեմք, հանդէս գոյս. յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի սերն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ որ տուաւ մեզ» (Հմ Ե,3-5): Քանզի Պօղոս Առաքեալի այս տողերը եւս, որոնցում եւ ոչ-կամածին ներկայ է հոնտորական խօսքի յայտնի կանոնակարգ⁴⁸, ըստ էութեան, մտայայտում են

47 Անդ, էջ 252 եւ 253-254:
 48 Անդ, էջ 255-256:

մարդկային կեանքի՝ ներաշխարհի ու կենսակերպի իրողութիւններում կերպառեալ վերին իմաստութեան ու նրան ենթակարգուած պերճախօսութեան վսեմ միութիւն, այն է՝ վերիմաստութեանն ինքնաբուխ ու անընկրկուն հետեւող ճարտասանութիւն⁴⁹: Ս. Օգոստինոսը նոյնօրէն վերիմաստութեանն (կամ խորիմաստութեանն) ինքնաբուխ հետեւող ճարտասանութիւն է մեկնայայտում Պօղոս Առաքեալի՝ Կորնթացիներին ուղղուած երկրորդ նամակի յայտնի տողերում եւս, որում խոստովանում է առաքեալներին առաւելութեամբ իր աշխատելու, ինչպէս նաեւ իր խօսքը որպէս «ծանուցի», «սաստիկի» ու արհամարհանքի արժանի նշաւակողներին, նուաստացնողներին ու ընդդիմացողներին ի պատասխան՝ իբրեւ նրանց հետ համաձայն հեզնանքով իրեն յատկորոշելով՝ «Թէպէտ եւ տգէտ եւս իցեմ քանիւ, այլ ոչ եթէ գիտութեամբ» (ԲՎր ԺԱ, 5-6), քանզի եւ իրենում է ճշմարտութիւնը Քրիստոսի. «Զի գոյ յիս հշմարտութիւնն Գրիստոսի» (ԲՎր ԺԱ, 10): Սրբազան հայրը նոյնօրէն մեկնայայտում է նաեւ Պօղոս առաքեալի միեւնոյն նամակի յաջորդիւ այլ տողերում իմաստութեան ու պերճախօսութեան զուգորդուած վսեմ միութիւն, որում նաեւ հռետորութեան արուեստի կառուցակարգ⁵⁰: Անդ՝ առաքեալն իր լինելութեան անկեղծ խոստովանութիւնում հաստատագրում է այսրաշխարհիկ բընութագրերով՝ իրեն մեղադրողների հետ իր նոյն ազգութիւնը, իսկ հոգեւոր կեցողութեամբ՝ առաւելաչափ քան ուրիշները՝ Քրիստոսին իր պաշտօնէութեամբ, վաստակով, մահուան վտանգով, գանահարութեամբ, բանտարկութեամբ, անքնութեամբ, տարատեսակ ու բազմապատիկ նեղութիւններով, վշտերով, տառապանքներով, զրկանքներով իր կեանքը եւ, սակայն, այդ ամենում Աստուծոն ապաւինած ու վկայած տկարութեամբ միայն պարծեցալը (ԲՎր ԺԱ, 16-30), որոնցում եւ հոգեւոր արթնութեամբ անձինք մտահայեցմամբ վերահասու են խորին իմաստութեան, իսկ նոյնիսկ խորաքունն ու ննջողը կարող է զգալ դրանցում գետայարդմամբ լիահոս պերճախօսութիւն⁵¹: Սուրբ Գրոց ոչ միայն Առաքելական Թղթերից, այլ նոյնիսկ կրթութեան ու գիտութեան ձեռքբերման մարդկային հնարաւորութիւններին անհաղորդ ու անուս մարդարէի (Ամովսի) խօսքերից է ս. Օգոստինոսը բերում օրինակներ, որոնցում եւս

49 Անդ, էջ 256-257, 272:
 50 Անդ, էջ 263:
 51 Անդ, էջ 257-258:

իրերի էութիւնից բխող իմաստութեան հետ մէկտեղ կարելի է նոյնիսկ մատնացոյց անել մարդկային հռետորութեան գործնական արուեստի ու տեսական գիտութեան դրոյթների համաձայն կառուցակարգ, որ, սակայն, անդ ներկայ է ոչ մարդկային կամածին դիտաւորութեամբ ու հնարքով, այլ ի վերուստ՝ աստուածային իմաստութիւնից իսկ նախականչուած՝ անյապաղ ու անբաժան իրեն հետեւման: Ս. Օգոստինոսն ամփոփելով իր միտքը՝ բանաձեւում է քրիստոնէական հռետորութեան հիմնադրոյթ. «...ոչ թէ իմաստութիւնն է փնտրում պերճախօսութիւն, այլ պերճախօսութիւնը ոչ մի բայլ անգամ չի նահանջում իմաստութիւնից»⁵²: Իրերի իսկութեան յայտմանը կոչուած իմաստութեանը անհարկի է որոնել ու հնարել պարծենկոտ ու հէնց սնափառ պերճախօս լեզուազորածութիւն՝ ի հաճոյութիւն ունկնդրին⁵³, այլ իրերի էութիւնն ու փոխկապակցուածութիւնը, կամ իրերի զօրութիւնն ու կարգաւորութիւնը, որպէս հէնց իրերի իսկութիւն, լեզու առնելով եւ այսու՝ իսկութիւնը բանայայտելով է պերճախօսութիւնը կորզում մարդկային բանական հոգու ու մտքի իմաստութեանը սպասաւորութեան:

Է.- ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՐՈԶԽՕՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ Ս. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՄԵԿԵՆԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

Հասկանալ գոյի որպէս այդպիսին գոյութիւնը, կը նշանակի՝ հասկանալ եւ մեկնողաբար բացորոշել կոչումն ու ըստ այդմ՝ իսկութիւնը: Արդ՝ ո՞րն է եկեղեցական քարոզխօսութեան բուն կոչումն ու ըստ այդմ՝ իսկութիւնը: Այս հիմնախնդիրը ներկայանում է որպէս մի քանի խնդիրների ներկարգաւոր հետեւողականութեամբ բաղկացած ամբողջական խնդրակարգ՝ ի՛նչ է, ինչպիսի՛ ինչ է, ինչի՛ համար է եկեղեցական քարոզխօսութիւնը: Իւրաքանչիւր իրի պարագայում հարցնելով թէ՛ ի՛նչ է, պատասխանը հէնց այդ իրի անունն է՝ մէկ բառով կամ բառային դարձուածքով իրն անուանելով եւ այդպէս ամենակարճաբար կերպով բնորոշելով: Արդ՝ այն հարցին, թէ՛ ի՛նչ է մեր ուսումնասիրութեան առարկայ հանդիսացող իրը, պատասխանը հարկ է լինի կարճաբար՝ լոկ իրի կամ իրի ներկայութեան անուանում մէկ բառով կամ բառային

52 Անդ, էջ 272:
 53 Անդ, էջ 341-342:

դարձուածքով՝ դեռեւս առանց իրը (եկեղեցական քարոզխօսութեան) որակական ամբողջութեամբ կայացնող, նոյնն է թէ՛ այդ իրը որպէս այդպիսին բաղկացնող բոլոր հական յատկութիւններէ բացորոշման, որն արդէն կը լինէր պատասխան երկրորդ հարցին, թէ՛ ինչպիսի՛ ինչ է եկեղեցական քարոզխօսութիւնը: Այսպէս, առաջնահերթ այն հարցին, թէ՛ ի՛նչ է մեր ուսումնասիրութեան առարկան, պատասխանն է՝ եկեղեցական քարոզխօսութիւնը: Եւ եկեղեցական քարոզխօսութիւնը ներկայանում է հէնց որպէս մեկնութիւն ու ուսուցանութիւն: Գրանք հանդիսանում են եկեղեցական քարոզխօսութեան էական յատկութիւններ, այնպիսիք, որ եւ կայացնում կամ բաղկացնում են եկեղեցական քարոզխօսութիւնը որպէս այդպիսին: Եւ երբ լիովին ամբողջական ասում է, թէ՛ եկեղեցական քարոզխօսութիւնը Սուրբ Գիրքը մեկնող ուսուցանութիւն է, ապա այդպիսի բնորոշումը ներկայանում է որպէս հէնց պատասխան արդէն երկրորդ հարցին, քանզի առաջնահերթօրէն բացայայտելով եկեղեցական քարոզխօսութեան սեռային յատկութիւնը՝ որպէս ուսուցանութիւն, այնուհետ՝ նշում է այդ ուսուցանութեան տեսակային յատկութիւնները՝ սուրբգրային ուսուցանութիւն եւ հէնց մեկնողական բնոյթի ուսուցանութիւն: Ասուածն առաւել ճշգրիտ հասկանալու համար, թերեւս, կարելի է բերել, կարծես, նոյնանման եւ, սակայն, լիովին թիւր սահմանում ու սխալ բնորոշում՝ եկեղեցական քարոզխօսութիւնը Սուրբ Գրքի մեկնութեան ուսուցանութիւն է, այնինչ, ըստ ս. Օգոստինոսի, այդպէս կարելի է փոքր-ինչ թերութեամբ սահմանել սրբազան մեկնագիտութիւնը (հերմենեւտիկան), որ, ըստ նրա մտայղացման, առաւել համապատասխան ու ամբողջական, ճշգրիտ ու լրիւ բնորոշող մտքի բանաձեւով կարելի է արտայայտել հետեւեալ կերպ. Սրբազան մեկնագիտութիւնը Սուրբ Գրոց ընդհանուր մեկնուսոյց տեսութիւն է:

Արդ՝ ճշմարտօրէն պատասխանելու համար երկրորդ հարցին, թէ՛ ինչպիսի՛ ինչ է եկեղեցական քարոզխօսութիւնը, նախ եւ առաջ, պէտք է նշել Սուրբ Գրոց բովանդակութիւնը բացայայտող ու բնորոշող հական յատկութիւնները, ըստ որոնց եւ գրուել է Սուրբ Գիրքը՝ ուղղուած ամենքին, ովքեր հաւատում են Աստծուն եւ Նրա Խօսքին: Եւ այդ կը նշանակի, որ առաջնահերթօրէն հարկ է հարցադրել, թէ՛ ինչպիսի՛ն է Սուրբ Գրոց բովանդակութիւնը: Քանզի եկեղեցական քարոզխօսութեան բուն առարկան, թէ՛ ի՛նչն է կամ ինչի՛ մասին է այն, պատասխանը յստակ է. եկեղեցական քարոզխօսութիւնը մեկնում է Սուրբ Գրքի բովանդակութիւնը,

իսկ թէ ի՛նչպէս պէտք է լինի քարոզխօսութեան եղանակը՝ խօսքարուեստը, որպէսզի լինի ուսումնասէր ունկնդրին հասկանալի ու կենսագործման համոզմունք ձեւաւորող, յստակ բացորոշում է եկեղեցական քարոզխօսութեան օգոստինոսեան հայեցակարգում:

Սուրբ Գրոց բովանդակութիւնը եւս բնորոշելի է՝ ըստ երեք փոխկապակցուած հարցադրութեան, թէ՛ ի՛նչ, ինչպիսի՛ ինչ եւ ինչի՛ համար է Սուրբ Գիրքը պատմում ու յայտնում մարդուն: Սուրբ Գրոց խորհրդապատումը աստուածային արարչութեան, նախախնամութեան ու փրկութեան իրաց եւ գործոց որպիսութիւնն ուղղաբանօրէն ու ալլաբանօրէն յայտնում է մարդուն ու հէնց մարդու համար: Եռատեսակ այս հարցադրութիւնը փոքր-ինչ բացորոշմամբ ներկայանում է հետեւեալ կերպ. ա) Սուրբ Գիրքն ի՛նչ է (կամ ինչի՛ մասին է) յայտնում մարդուն, բ) Սուրբ Գիրքն ինչպիսի՛ ինչ է բացայայտում մարդուն, գ) Սուրբ Գիրքն իրենում պատմողն ինչի՛ համար է յայտնում մարդուն: Ըստ այդմ՝ Սուրբ Գրոց բովանդակութիւնը ս. Օգոստինոսի աստուածաբանական, փիլիսոփայական ու մեկնագիտական աշխատութիւններից բխեցմամբ, աստ ներկայացնում է եօթ հնարաւորութեամբ, որոնք էլ իրենց հերթին ընձեռում են եկեղեցական քարոզխօսութիւնը սահմանող մտքի բանաձեւերի բազում հնարաւորութիւններ:

Ըստ ս. Օգոստինոսի՝ Սուրբ Գիրքը յայտնելով գոյերի եռաստիճան ենթակարգութիւն՝ յաւիտենական անփոփոխ Աստուած, յաւիտենական փոփոխուն հոգի եւ ժամանակագոյ փոփոխուն ու անցողիկ նիւթեղէն աշխարհ⁵⁴ եւ ուրեմն մարդկային կեանքում յաւիտենական ու ժամանակաւոր գոյերի ներկայակցութիւն՝ ամենայնում յայտնաբանում է աստուածայինը, որ եւ մեկնագէտ սրբազան հայրն՝ իր հերթին մեկնողաբար լուսաբանում է գիտամեկնողական իր աշխատութիւններում: Այսու՝

Ա.- Սուրբ Գիրքը Աստծուն եւ արարեալ ու նախախնամեալ ամենայնում աստուածայինը յայտնաբանող խորհրդապատում է:

Սուրբ Գիրքն իրենում պատմեալ ամենայն իրերում ու գործերում յայտնաբանելով բուն աստուածայինը, ըստ օգոստինոսեան

54 VERNON J. BOURKE, *Augustine's View of Reality*. The Saint Augustine Lecture 1963 (Villanova: Villanova Press, 1964), p. 3; TESKE ROLAND J. (S.J.), *Ultimate Reality according to Augustine of Hippo* – TESKE ROLAND J. (S.J.), *AUGUSTINE HIPPO: Philosopher, exegete, and theologian*, second collection of essays, Marquette University Press, Milwaukee 2009, p. 24-25.

գիտամեկնողական բնորոշման, պատմում ու խորհրդաբանորէն յայտնում է աստուածային իրողութիւններ ու փրկութեան իմաստութիւն⁵⁵: Ըստ այդմ՝

Բ.- Սուրբ Գիրքը աստուածային իրողութիւնների ու փրկութեան իմաստութեան խորհրդապատում է:

Ս. Օգոստինոսը մեկնագիտութեան համաբովանդակ առարկայ իմացայայտելով Աստծուն, մարդուն ու ժամանակագոյ աշխարհը, ինչպէս նաեւ յատկորոշելով երեք սեռի այդ իրերի նկատմամբ մարդու յարաբերակցութիւնը՝ որպէս Աստծոյ ու մերձաւորի նկատմամբ երկմիասնական սիրոյ եւ ժամանակագոյ աշխարհը կազմող իրերի նկատմամբ՝ որպէս պիտանի եւ օգտակար օգտագործման յարաբերութիւններ, ընդամին՝ մարդուն որպէս մերձաւոր դիտելով ե՛լ Աստծուն, ե՛լ հրեշտակներին, ե՛լ մարդկանց, այդպէրպէ՛ս մեկնագիտութեան առարկայի իր յայտորոշման մէջ բաց չի թողնում եւ ոչ մի գոյաւոր, որ եւ պատմում է Սուրբ Գրքում⁵⁶: Ահաւասիկ, ըստ ս. Օգոստինոսի սուրբգրային մեկնագիտական հայեցակարգի՝ մարդու գերագոյն հաճոյքի, սքանչութեան ու երանութեան առարկան Աստուած է, իսկ մարդիկ միմեանցով՝ յանուն Աստծոյ ու աստուածայինի փոխսքանչացման ու փոխօգտման առարկայ են, եւ նիւթեղէն, ժամանակագոյ ու անցողիկ աշխարհը կազմող իրերը մարդկանց լոկ պիտանի ու օգտակար են Աստծով երանութեան հասնելու համար⁵⁷: Ըստ այդմ՝

Գ.- Սուրբ Գիրքն իր խորհրդապատումով յայտնում է աստուածային իմաստութիւնն ամենայն սքանչելեաց եւ պիտոյից:

Ըստ սուրբ հայրերի քրիստոնէական ուսմունքի՝ Աստուած այն ամէնը, ինչ արարել է, նաեւ նախախնամում է⁵⁸: Եւ Աստուած իր ընտրեալներին նաեւ փրկագործում է: Աստծոյ ամենայն գործերը նախաձեռնուել ու կատարուել են սիրոյ լիութեամբ: Աստուած սիրով արարել ու սիրով նախախնամում է ամենայն արատուած սիրով արարել ու սիրով նախախնամում է ամենայն արատուած սիրով է կատարուել նաեւ Աստծոյ Բանի մարդեղութիւնն ու Տէր Յիսուս Քրիստոսի փրկագործութեան աստուածային տնօրինութիւնը: Այսու՝ դեռ միայն նախնական ու համառօտ

ամրագրմամբ՝ Սուրբ Գիրքը ներկայանում է որպէս Աստծոյ եւ իր սիրոյ գործերի խորհրդապատում: Իսկ Աստծոյ սիրոյ գործերն Սուրբ Գրքոց բանայայտմամբ ներկայանում են որպէս աստուածային սիրով արարչութիւն, նախախնամութիւն ու փրկագործութիւն: Ահաւասիկ, ս. Օգոստինոսի աշխատութիւններում աստուածային արարչութեան, նախախնամութեան ու փրկագործութեան սուրբգրային գիտամեկնութեամբ ընձեռնուում է Սուրբ Գրքոց բովանդակութիւնը բացայայտող մտքի մէկ այլ բանաձեւի հնարաւորութիւն:

Դ.- Սուրբ Գիրքը Աստծոյ յաւիտեական սիրոյ ու իմաստութեան գործերի եռակազմութեան՝ արարչութեան, նախախնամութեան ու փրկագործութեան խորհրդապատում է:

Ըստ ս. Օգոստինոսի բնորոշման՝ Սուրբ Գիրքն իրենում պատմեալ ամենայն իրողութիւններում ու գործերում յայտնաբանում է աստուածային սիրոյ գործերն ու ներգործութիւնը: Մեկնագէտ սրբազան հայրը որպէս մեկնագիտութեան գերագոյն առարկայ դիտարկելով Աստծուն, իմացայայտում է Նրան որպէս միակ յաւիտեական Սէր, միակ յաւիտեական իմաստութիւն ու միակ յաւիտեական Բարի: Եւ ըստ մեկնագէտ սրբազան հօր մեկնահայեցակարգի՝ Սուրբ Գիրքը պատմում ու յայտնում, կրթում ու կոչում է մարդկանց՝ աստուածային յաւիտեական իմաստութեան կեանքի⁵⁹: Ըստ այդմ՝

Ե.- Սուրբ Գիրքը աստուածային յաւիտեական իմաստութեան կեանքի ու փրկութեան խորհրդուսոյց իմաստապատում է:

Աստուածաշնչում եւ ս. Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգում ու նաեւ այլ աշխատութիւններում հոգեւոր «սէր» հասկացութիւնը, ըստ իս, կիրառւում է գոյգ իմաստներով՝ որպէս Աստծոյ սէր եւ մարդու հոգեւոր երկմիասնական սէր՝ առ Աստուած ու մերձաւոր, թէեւ մասնագիտական գրականութեան մէջ միակողմանիօրէն հաստատուել ու վերահաւաստուել է միայն երկրորդ իմաստը, որ «ըստ Օգոստինոսի, Աստծոյ եւ մերձաւորի նկատմամբ սէրը Սուրբ Գրքոց դիտաւորութիւնն է»⁶⁰: Ըստ այդմ՝

55 Блаженный Августин, Христианская наука, или Основания св. Гермeneвтики и церковного красноречия, Киев 1835, с. 316.
56 Անդ, էջ 17-59:
57 Անդ, էջ 17 եւ 59:
58 Հմմտ. նաեւ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս 1729, էջ 157:

59 Блаженный Августин, Христианская наука, или Основания св. Гермeneвтики и церковного красноречия, Киев 1835, с. 24-25.
60 Ch. COSGROVE, "Toward a Postmodern Hermeneutics Sacra: Guiding considerations in choosing between competing plausible interpretations of Scripture", in The meaning We Choose. Hermeneutical Ethics, Indeterminacy and Conflict of Interpretations,

Զ.- Սուրբ Գիրքը Աստծոյ՝ առ արարած սիրոյ եւ մարդու՝ առ Աստուած ու մերձաւոր հոգեւոր երկմիասնական սիրոյ խորհրդապատում է:

Ըստ ս. Օգոստինոսի, Սուրբ Գիրքն իր պատմումի աստուածային նախակոչուածութիւն ու իմացեալ կոչում, ըստ որի եւ իսկութիւն՝ մեկնակէտ ու նշանակէտ, դիտաւորութիւն ու կատարում ունի մարդու՝ առ Աստուած ու մերձաւոր երկմիասնական հոգեւոր սիրոյ բանայայտումը՝ ներկրթելով մարդկային բանական հոգին սիրոյ գիտութեանն ու կատարումին: Ս. Օգոստինոսը Սուրբ Գրոց մեկնագիտութեան իր քննա-խորհրդածութիւններում որպէս սուրբգրային խորհրդապատումի դիտաւորութիւն ու կատարումի լրում, հոգեւոր սէրը բանայայտում է որպէս նպատակ ու միջոց մարդկային սեռի ներկրթութեան⁶¹, ինքնութեան ու համակեցութեան քրիստոնէական հոգեւորութեամբ ներկատարելագործման: Ըստ այդմ՝

Է.- Սուրբ Գիրքը Աստծոյ ու մերձաւորի նկատմամբ երկմիասնական հոգեւոր սիրոյ պատուիրանին՝ գիտութեանն ու կատարումին ներկրթող՝ մարդկային հոգեկեցոյց կենսակերպի եւ յաւիտեանական փրկութեան իմաստութեան խորհրդուսոյց իմաստապատում է:

Արդ՝ ս. Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգից ու նաեւ աստուածաբանական, փիլիսոփայական բնոյթի իր աշխատութիւնների սուրբգրային գիտամեկնութիւններից բացայայտելով եկեղեցական քարոզխօսութեան ե՛լ ինչը, ե՛լ ինչպէսը, ըստ Դաւիթ Անյաղթի՝ Արիստոտէլի աշխատութիւններից ուսեալ սահմանման ընդհանուր տեսութեան, հնարաւորութիւն է ընձեռնուում ամրագրելու եկեղեցական քարոզխօսութիւնը սահմանող ու բնորոշող՝ էական յատկութիւններ բացայայտող, մտքի բանաձեւերի բազում տարբերակներ: Օգոստինեան սուրբգրային մեկնագիտութեան՝ մեկնուսոյց ընդհանուր տեսութեան, որում եւ՝ իսկութեան մեկնախօսութեան (եկեղեցական հռետորութեան կամ քարոզխօսութեան) նրա հայեցակարգից, եւ, անշուշտ, Սուրբ Գրոց բովան-

Ch. COSGROVE, (ed.) T&T Clark International, London, New York 2004, p. 47: Նաեւ՝ Блаженный АВГУСТИН, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киев 1835, с. 58-59:

61 Блаженный АВГУСТИН, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковного красноречия, Киев 1835, с. 58-59, իսկ լիովին մանրամասն ու հետեւողական բացորոշմամբ՝ էջ 17-59:

դակութիւնը մեկնողաբար բանայայտող գիտամեկնողական խորհրդածութիւններից, ըստ իս, բխում են եկեղեցական քարոզխօսութիւնը սահմանող ու բնորոշող՝ էական յատկութիւնները բացայայտող, մտքի բանաձեւերի հնարաւորութիւններ: Այդ սահմանումները ձեւակերպուում են երբեմն առանձնաբար միայն Սուրբ Գրքի բովանդակութեան, երբեմն եկեղեցական հռետորութեան էական առանձնապատկութիւնների՝ երկուստեք միասնաբար բացորոշմամբ:

Ս. Օգոստինոսի մեկնահայեցակարգից հետեւող՝ Սուրբ Գրոց բովանդակութեան վերոբերեալ Ա. եւ Բ. բնորոշումներից կարելի է բխեցնել եկեղեցական քարոզխօսութեան երկու սահմանում:

Ա. Եկեղեցական քարոզխօսութիւնը աստուածային տեսագործական իմաստութեանն ուսումնասէր հանրութեանը Սուրբ Գրքում պատմեալ՝ ամենայնուրեւ աստուածային ու փրկական իմաստութեան ուսուցանութիւն է:

Կամ՝

Բ. Եկեղեցական քարոզխօսութիւնը ամենայնուրեւ աստուածային իսկութիւնը բացայայտող եւ փրկութեան առաջնորդող տեսագործական իմաստութեան՝ նշմարտութեան եւ բարու ուսուցանութիւն է:

Ըստ Սուրբ Գրոց բովանդակութեան՝ օգոստինեան մեկնահայեցակարգից բխող Գ. բնորոշման՝

Գ. Եկեղեցական քարոզխօսութիւնը սուրբգրային մեկնախօսութիւն է՝ Աստծոյ ու աստուածային յաւիտեանական բարիքներին մարդու միութիւնը՝ որպէս հոգեւեանութիւն ու երանութիւն պատճառող, իսկ նիւթեղէն ժամանակաւոր բարիքները՝ որպէս երանութեան վերընթացող մարդկային կեանքին իրենց պիտանութեամբ օգտագործման ուսուցանող:

Կամ ըստ եկեղեցական քարոզխօսութեան մերձաւոր կատարումի՝

Դ. Եկեղեցական քարոզխօսութիւնը Սուրբ Գրոց աստուածային գործերի փրկանշանակ սիրոյ ու իմաստութեան խորհրդուսոյց մեկնութիւն է՝ ամենայն մեղքերից, ախտերից ու արատներից անձի խորշմամբ՝ հոգեւայան ու կենդանագրկող չարամոլութիւններից աստուածային զօրակցութեամբ ազատագրման՝ պատրանագերծման ու կապանագերծման:

Եւ նկատի ունենալով, որ հոգեւոր խաւարից ու յաւիտենական կորստեան մատնող ամենայն մոլութիւններից անձի ազատագրումը կայանում է միմիայն երբեմն նախընթաց եւ մշտապէս նաեւ զուգընթաց՝ հոգեւոր լոյսով առաւելացմամբ, ինչպէս եւ իր մեկնազիտական երկում զուգադիր սուրբգրային թանձրացեալ գիտամեկնութիւններով բանայայտում է ս. Օգոստինոսը, կարելի է ամրագրել անհրաժեշտ հոգեւոր լուսաւորութեամբ մարդկային բանական ոգու՝ առ իմաստութեան կատարելութիւն ներկրթող ու ամրապնդող՝ եկեղեցական քարոզխօսութեան բուն կոչումն ու ըստ այդմ՝ իսկութիւնը.

Ե. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը Սուրբ Գրոց աստուածային գործերի փրկանշանակ սիրոյ ու իմաստութեան խորհրդուսոյց մեկնութիւն է՝ Աստուծոյ եւ հոգեկեցոյց ու կենդանարար աստուածային յաւիտենական բարեաց նկատմամբ հոգեւոր փափափին հաւատարմութեան համոզումնէին ու կատարումին ներկրթող ու ամրապնդող:

Սուրբ Գրոց բովանդակութեան՝ օգոստինեան մեկնահայեցակարգից հետեւող Դ. եւ Ե. բնորոշումներից բխեցմամբ՝ կարելի է ամրագրել եկեղեցական քարոզխօսութեան տասներկու կամ դրանց առաւել բացորոշ տարբերակներով հանդերձ՝ տասնչորս սահմանում եւս.

1. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը աստուածային յաւիտենական իմաստութեան բարեպտուղ կեանքի ու փրկութեան խորհրդուսոյց սուրբգրային մեկնախօսութիւն է:

2. Եկեղեցական մեկնագէտ ֆարոզխօսութիւնը Սուրբ Գրոց փրկամէտ խորհրդապատումի բանահասու մեկնորոշումն է աստուածային յաւիտենական իմաստութեան խորհրդիմացութեան ու կենսագործման ձգտող ամենքին:

3. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը ամենայնում աստուածայինի ու հէնց փրկանշանակ յաւիտենական իմաստութեան սուրբգրային խորհրդապատումի պարզայայտ մեկնորոշումն է՝ ի նպաստ աստուածային իմաստութեանն ուսումնասէր ու բարեպաշտ ունկնդրի համոզմունքի ու կատարումի:

4. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը աստուածային սիրոյ ու իմաստութեան կատարումի սուրբգրային խորհրդապատումի՝ ի փրկութիւն մարդկանց մեկնորոշող բանայայտութիւն է:

5. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը Սուրբ Գրքում Աստուծոյ գործերի եռակագմութեան՝ արարչութեան, նախախնամութեան ու յաւիտենական փրկութեան, իմաստապատումի մեկնութիւնն է՝ ի նպաստ ունկնդիրների՝ առ Աստուած հաւատի, յոյսի ու սիրոյ կատարելութեան ներկրթութեան եւ Աստուծոյ հետ յաւէտ միութեան:

6. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը մարդկային հոգին ու վարքը՝ առ աստուածային տեսագործական իմաստութիւն ներկատարելագործող ուսուցանութիւն է:

Կամ առաւել բացորոշ՝

7. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը մարդկային ինքնութեան եւ այլոց հետ համակեցութեան՝ առ քրիստոնէական տեսագործական իմաստութիւն ու ամենայն առաքիւնութիւն ներկատարելագործող ուսուցանութիւն է:

Նկատի ունենալով Սողոմոն Իմաստունի՝ որպէս իմաստութեան սկիզբ՝ Աստուծոյ նկատմամբ երկիւղը եւ ապա՝ կատարեալ սիրով երկիւղի յաղթահարման առաքելական խօսքը, ս. Օգոստինոսը մեկնազիտական իր աշխատութիւնում ձեւակերպում է իմաստ(ն)ութեան եօթաստիճան իր հայեցակարգը՝ յայտանշելով իմաստ(ն)ութեան այն աստիճանները կամ մակարդակները, որոնց պարտ է վերընթանայ ու հասու լինի Սուրբ Գրոց հասկացման ձգտող անձը⁶²: Ըստ այդմ՝

8. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը Սուրբ Գրոց խորհրդապատումի մեկնութեամբ աստուածային իմաստութեանն ուսումնառու ունկնդիրների հոգու ու մտքի արթնութեան՝ առ Աստուած երկիւղով մեկնարկը ներկրթող եւ առ Աստուած սիրով իմաստնացեալ խորհրդիմացութեան ու կատարումի հասունացնող բանայայտութիւն է:

Կամ նոյնը առաւել հակիրճ՝

8ա. Եկեղեցական ֆարոզխօսութիւնը Սուրբ Գրոց խորհրդապատումի՝ Աստուծոյ նկատմամբ երկիւղով հասկացեալ աստուածային իմաստութիւնը Աստուծոյ նկատմամբ սիրով բանահասու իմաստնացման հասունացնող ուսուցանութիւն է:

Իսկ արդէն նկատի ունենալով պղատոնեան սահմանումն իմաստասիրութեան՝ նմանուել Աստծուն, ըստ մարդկային կարողութեան, որից նոյնպէս ուսեալ էր ս. Օգոստինոսը, կարելի է ամրագրել, որ՝

9. Եկեղեցական փարոզխօսութիւնը մարդկային ինքնութիւնը աստուածանմանութեան ներկատարելագործող ֆրիստոնէական հաւատի ու մտքի ճշմարտութիւնների ուսուցանութիւն է:

Կամ առաւել բացորոշ՝

9ա. Եկեղեցական փարոզխօսութիւնը մարդկային ինքնութիւնն ու կեցողութիւնը աստուածանմանութեան ներկատարելագործող առաքինութիւնների եւ փրկութեան իմաստութեան բանահասութեան ու կատարումի ներկրթող ուսուցանութիւն է:

Այնուհետ, ըստ ս. Օգոստինոսի մեկնահայեցակարգից բխող՝ Սուրբ Գրոց բովանդակութեան վերոբերեալ Զ. եւ Է. բնորոշումների՝

10. Եկեղեցական փարոզխօսութիւնը աստուածային գործերի սուրբգրային խորհրդապատումի փրկանշանակ սիրոյ ու իմաստութեան խորհրդուսոյց մեկնութիւն է՝ ի սնոյց ու կատարելութիւն մարդկային հոգու՝ առ Աստուած ու առ մերձաւոր սիրոյ, մտքի իմաստնութեան ու յօժարակամ կենագործման:

11. Եկեղեցական փարոզխօսութիւնը եռամիասնօրէն՝ մարդկային սիրտը՝ առ աստուածասիրութիւն ու մարդասիրութիւն երկմիասնական հոգեւոր զգացմունքի, միտքը՝ առ խոհեմութիւն եւ կենսակերպը՝ առ ամենայն գործնական առաքինութիւն ներկատարելագործող հոգեւոր վերընթացութեան ուսուցանութիւն է:

Սաղմոսներում Դաւիթը Սուրբ Հոգով ներշնչուած յայտնում է, թէ՛ «Ապականեցան եւ պղծեցան յանօրէնութեան իրեանց, եւ ոչ ոք է որ առնէ զփաղցրութիւն» (Սղ ՄԲ,2), «Փաղցրութիւն արարեր ընդ ծառայի բում, Տէր, ըստ բանի բում» (Սղ ՃԺԸ,65), «Փաղցրութիւն, զխրատ եւ զգիտութիւն ուսո՛ ինձ, զի ի պատուիրանս Քո ես հաւատացի» (Սղ ՃԺԸ,66), «Փաղցր ես դու, Տէր, եւ փաղցրութեամբ Քով ուսո՛ ինձ զարդարութիւնս քո» (Սղ ՃԺԸ,68): Եւ աստ՝ քաղցրութիւնը որպէս հէնց Աստծոյ կամ հոգեներշնչուած անձանց խօսքի՝ ունկնդրի հոգուն ներգործութիւն, իրագործում է ե՛ւ խօս-

քի բովանդակութեան, ե՛ւ խօսելակերպի (կամ խօսքարուեստի) երկմիասնութեամբ, որին շնորհալի եւ ուսեալ՝ իր մեկնագիտութեամբ ու նաեւ եկեղեցական քարոզխօսութեան հայեցակարգով գիտակ ու նաեւ ամենքին կրթունակ է ս. Օգոստինոսը: Ըստ այդմ՝

12. Եկեղեցական փարոզխօսութիւնը սուրբգրային խորհրդապատումից մեկնութեամբ բանայայտ՝ Քրիստոսի սիրոյ կատարումի կենդանարար ու փրկարար հոգեւոր փաղցրութիւնը՝ միմեանց հետ ազնուահոգի խօսմամբ ու գործմամբ փոխներգործելու ուսուցանութիւնն է:

Շարունակելի

ՌՈՄԻԿ ՔՈԶԱՐԵԱՆ

Summary

CHURCH RHETORIC AS A SCIENTIFIC-THEORETICAL AND ART-PRACTICAL UNDERSTANDING AND INTERPRETATION OF THE WISDOM OF HOLY SCRIPTURE IN ST. AUGUSTIN'S HERMENEUTICAL CONCEPTION

ROMIK KOCHARYAN

In this scientific article is presented St. Augustine's theory of church preaching (sermon) in his conception of "Sacred Hermeneutics". St. Augustine in his hermeneutic concept states two main tasks: finding (understanding) the true meaning of the Holy Scripture and a way of communicating and/or presenting (interpreting) the understood meaning to others, and in search of a solution to the second task, he also develops the concept of the theory and practice of church homiletics. Ancient rhetoric, rethought and reformulated by St. Augustine in his concept of hermeneutics and Christian science itself, is used to assist the exegete and preacher of the wisdom of Holy Scripture. According to St. Augustine, church rhetoric is a discourse and the very utterance of the divine wisdom of the Holy Scriptures and divinity itself in everything – for the salvation of people. St. Augustine, for the training and forming of a church orator, considers listening to speakers and reading their papers more instructive and useful than learning the rules of the science of ancient rhetoric. In his concept of church homiletics, including the three necessary requirements of rhetoric formulated by Cicero, he emphasizes the unification of wisdom and eloquence as the necessary and preferred duty of the formation and perfection of church preaching. In the article, as the aforementioned essential properties, the author suggests definitions of church preaching.

ԱՌԱՋԱԻՈՐԱՑ ՊԱՀՔԸ
ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շար. 3 «Բազմալեզ», ձՁԲ (2024), քիւ 1-2, 64-86)

ԱՌԱՋԱԻՈՐԱՑ ԵՒ ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՀՔԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԾԻՍԱՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԱԻՈՐՈՒՄԸ

(Ե. ԳԼԽԻ ՅԱԻԵԼՈՒԱԾ-ԱՐՏԱՃԱՌ)

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶԱՏԻԿԸ ԵՒ ԶԱՏԿԱԿԱՆ ԵՌՕՐԵԱՆ

Ինչպէս տեսանք նախորդ ենթագլխում, չորեքտասաներորդական Ջատիկը ոչ թէ այդ տօնի մերժուած տարբերակներից էր, այլ՝ առաւել հինն ու նախնականը: Ուստի բաւական մեծ է հաւանականութիւնը, որ այն լինէր յետագայում նախընտրելի դարձած կիրակնօրեայ Ջատիկի ծիսաբանական նախահիմքը: Յայտնի է, թէ երբ եւ որտեղ է առաջինը տեղի ունեցել այս փոխակերպումը եւ թէ ինչպիսին են եղել նրա պատմական դրդապատճառները³⁹⁰: Բայց փաստ է, որ կիրակնօրեայ Ջատիկի ամենահին ի-

390 Ենթադրում է, օրինակ, որ այդպիսի փոխակերպում կարող էր տեղի ունենալ Հրէաստանում՝ Շիմոն Բար-Կորիսայի՝ Հռոմի դեմ բարձրացրած ապստամբութեան 135 թ. պարտութիւնից յետոյ, երբ հրեայ-քրիստոնէայ նուիրապետները լիեցին Երուսաղէմը, եւ նրանց փոխարինեցին հեթանոսական ծագումով քրիստոնէայ եպիսկոպոսներ, որոնք էլ նախընտրեցին, Նիսանի 14ի փոխարէն, Ջատիկը տօնել կիրակի օրը (K. HOLL, *Ein Bruchstück aus einem bisher unbekanntem Brief des Epiphanius*, in *Der Osten*, vol. II,